Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

633.5
Դ-48
20642
24 SEP 2010

ՊԵՏԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ և
ՐԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

№ 5

ԾԽԱԽՈՏՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՑԱՆՈՒՄԸ

633.5
Դ-48

9 3 1

13.11.2013

19232

Մասսայականորեն փորձեր անելը գյուղատնտեսության արագորեն սոցիալիստական վերակառուցման գրավականն է։

Կոլխոզներ, սովխոզներ, դաշտային տնտեսությունը լավագույն ձևով տանելու համար, գիտական հարցերը փորձերի միջոցով վճռեցեք։

Գյուղատնտեսական խմբակների միջոցով փորձեր կատարեցեք ձեր հողերի վրա, գյուղատնտեսի անմիջական ցուցմունքներով։

Աշխատեցեք ձեր դաշտերի ծխախոտի բերքը և որակը բարձրացնել։

Ծխախոտի ամեն մի ավելի ցենտները, կուլակին—խորհրդային իշխանության թշնամուն—տրված հարված է։

— ՑԱՆԵԼԻՔ ՀՈՒՆՏԻ ՎՈՐԱԿԸ ԵՎ ՔԱՆԱԿԸ.

Առողջ շիթիլ ստանալու համար, պետք է հետևել պետական ծխախոտաբուծական հիմնարկի փորձերով ստուգված ծխախոտի հունտեր ցանելու չափանիշներին, այսինքն ապակյա ջերմոցի 1 քառ. մետրի վրա ցանելու յե 1 գրամ, իսկ բացոդյա ածուներում 1, 1 գր.։ Լավագույն պայմաններում հունտը ծլում է 90%։ Որինակ՝ մի հեկտար տնկելու համար, ապակե ջերմոցում, պետք է ունենալ 42 քառ. մետր ցանված մակերես, բացոդյա ածունների պայմաններում՝ 45 քառ. մետր, վորի համար առաջին դեպքում գործածվում է 42, իսկ յերկրորդ դեպքում 45 գր. ծխախոտի հունտ։ Ցույց տրված ի հակառակ, ցանքի չափը ավելացնելու դեպքում, տալիս է թույլ, յերկարած շիթիլներ, վորոնք շատ անգամ ջերմոցներում յենթարկվում են հիվանդությունների և դաշտում տնկելիս վատ են բռնում ու փճանում են, հետևվարար առաջացնում են բանվորական ուժի անարդյունաբեր վատնում։ Զափից ավելի ցանցառ ցանելիս, շիթիլները նույնպես լավ վորակ չեն ունենում—կարճ ցողունավոր—վորը հնարավորություն չի տալիս շիթիլը պահանջված խորությամբ տնկելու և մեծ տոկոսով տնկում է առաջացնում։

Ինչքան հունտ պետք է ցանել ջերմոցներում, վորպես զի 100 հեկտար ծխախոտ տնկվի։

Վերև բերված հաշվից կարելի յե յենթադրել, վոր բավական է ունենալ մոտավորապես 5 կիլոգրամ հունտ։ Պետական ծխախոտաբուծական հիմնարկությունը խորհուրդ է տալիս կրկնակի չափով ունենալ, այսինքն 10 կիլոգրամից վոչ պակաս, հետևյալ պատճառներով։ Անբարենպաստ յեղանակները կարող են ուշացնել պատրաստի ծլեցրած հունտերի ցանումը, իսկ հետո դրանք անպետք կլինեն, սառնամանիքներ պատահելու կամ ուրիշ պատճառներով շիթիլների վճացում, վորի համար պետք է լինում նորից ցանել կամ թե չե, հունտը քիչ տոկոսով ծլելիս, պետք է լինում չափանիշը ավելացնել։

— ՋԵՐՄՈՑՆԵՐՈՒՄ ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ.

Ցանքսի ժամանակը աչքի առաջ ունի գլխավորապես ծխախոտի հասունացնելու շտապեցումը, ամենանպաստավոր յեղանակին հավաքելը և չորացնելը։ Դրա համար, նկատի ունենալով, վոր ծխախոտը դաշտում աճելու և հասունանալու համար պահանջում է 3—4 ամիս և վերջին հավաքվածը չորացնելու համար բարենպաստ 3 շաբաթ ժամանակամիջոց, հետևաբար պետք է ջանալ շուտ ցանել ջերմոցում, շիթիլները տնկելուց գրեթե 2 ամիսներ առաջ։

Վորպեսզի ծխախոտի տնկումը իրա ժամանակին ապահովվի, ջերմոցներում ցանելը սկսելու յե մարտ ամսի կեսերին։ Այս ժամկետը այս կամ այն կողմ կարող է փոխվել. նայած շրջանի կլիմայական պայմաններին։

Շիթիլների տեղափոխումը պետք է կատարել յերկու—յերեք ժամկետներով, վոպեսզի ինքիրանդ ապահովես, պատրաստի շիթիլներով, ցուրտ յեղանակների կամ հողի պատրաստումը ուշանալու դեպքում տնկումը ձգձգելու կամ ուշացնելու դիմաց։

Ինչ վերաբերում է չոր հունտի ցանումը կարծրահող ածուներում, այդպիսիները ջերմոցում ցանելու ժամկետից 2 շաբաթ շուտ պետք է սկսել, վորովհետև չոր հունտերը բուսնում են 7 որ ուշ, քան ծլեցնելով ցանելը։ Ցանել կարելի յե թե չոր և թե ծլեցրած հունտերով։

Ցանքսը ծլած հունտով կատարելիս, շիթիլի բուսնելու ժամանակը կրճատում ենք, որինակի համար՝ մի շաբաթով։ Անբարենպաստ գարնանը այս միջոցը միակն է հանդիսանում, վորպեսզի տնկելու ժամանակը բաց չթողնվի։

Վստահությամբ կարելի յե չոր հունտով ցանելը հանձնարարել։ Այդպիսի ցանքսը տալիս է ավելի առողջ և դիմացկուն շիթիլներ, ջրելու, ծածկելու ավելի քիչ աշխատանք է պահանջում։ Չոր հունտ ցանելը ունի նաև իր բացասական կողմեր, այսպես, անպետք բուսականությունը ավելի շուտ է աճում քան ծխախոտը, վորոնք թույլ արմատ են բռնել և հեշտությամբ ջնջվում են։

— ՀՈՒՆՏԻ ԾԼԵՑՈՒՄԸ.

Ծխախոտի հունտը ծլեցնելու լավագույն բարեխառնությունը համարվում է 25° ռեոմյուրով (կամ 31° ցելսիով)։

Ծլեցնելու հունտերը վոչ այնքան մեծ, վոչ շատ խիտ տոպրակների—վորոնց պարունակությունը 1 կիլոգրամից ավել չե և ավելի լավ է 0,5 կիլոգրամ—մեջ լցնելով 12 ժամ դնելու յե տաք, բայց վոչ յեռ, ջրի մեջ։ Թրջած հունտը ջրից հանելով, մաքուր ջրով դարձյալ պետք է լվանալ և ավելորդ ջուրը հեռացնելով տեղավորել տաք սենյակում, հունտի վրա մի բանով ծածկելու յե, վոր շատ չի չորանա։ Շատ ոգտակար է հունտը ծլեցնել փոփոխական բարեխառնությամբ, այսինքն, մի առժամանակ բարեխառնությունը պակասեցնել 6—7°, այս դեպքում ուռճացման տոկոսը բարձրանում է։ Կա-

7488-53

19-232

11865

բեռը է նույնպես, վոր հնտին ողը մատչելի լինի, դրա համար խիտ առպրակների մեջ չպետք է լեցնել։

Ծլումը կարելի յե ավարտած համարել, յերբ հունտը ցույց է տալիս սպիտակ ծիլեր։ Այլևս պահել պետք չե, վորովհետև ծիլերը աճելիս հեշտությամբ կոտրվում են և ցանելիս իրար հետ շղթայվում են ու ջերմոցի մակերեսի վրա անհավասարաչափ են բաժանվում։

— ԾԽԱԽՈՏԻ ՀՆՏԻ ՑԱՆԵԼԸ.

Նախ քան ցանելը, ջերմոցի յերեսը պետք է լավ մանրել, հավասարեցնել և մի քիչ խտացնել տախտակի կամ թակի միջոցով։ Միահավասար ցանելու համար ցանվելիք հնտերը պետք է խառնել ավազի կամ ջերմոցային խառնուրդի հետ, վորը ցանելու համար է պատրաստած։

Ածուն կամ ջերմոցը յերկայնությամբ գծով բաժանում ես յերկու հավասար կեսերի, նախ ածուի մի կեսն են ցանում, հետո մյուսը։

Վորպեսզի ցանելու չափը ուղիղ պահվի և միահավասար ցանվի, պետք է մի ածուի կամ ջերմոցի պահանջած չափով հունտ խառնել խառնուրդի հետ, վերև տրված քանակությամբ և ապա նույն հաշվով պատրաստել նույն տեսակ հունտի խառնուրդ ցանվելիք ամբողջ մակերեսի համար։ Որինակի համար՝ ջերմոցում 45 քառ. մետր ցանելու համար, այսինքն. մի հեկտար տնկելու համար, պետք է 45—50 գր. հունտ խառնել յերկու դույլ ջերմոցային խառնուրդի հետ։

Այդ քանակությամբ հնտախառն խառնուրդը ամբողջովին բավարար է 45 քառ. մետր մակերես միահավասար ցանելու համար։

Հունտի հետ խառնվելիք բաղադրության հողը, բուսահողը կամ ջերմոցային խառնուրդը պետք է չվարակված, փափկացրած լինի։

— ՑԱՆՔՍԻ ԾԱԾԿԵԼԸ.

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցանքսի ծածկմանը։ Ջերմոցում ցանելուց անմիջապես վերջ ցանվածքը ծածկելու յե մաղված, մանր, փտած գոմաղբով կամ ջերմոցային խառնուրդով, վորը բաղկացած է լինում 2 թի գոմաղբից, 1 թի ավազից և 1 թի հողից։ Ցանվածքը զգուշությամբ պետք է խտացնել թակով։

Հունտի ծածկվածքի խորությունը, այսինքն ծածկելու համար փռված հողի շերտի հաստությունը պետք է հավասար լինի 3—4 միլիմետրի (մատիտի հաստության կեսին)։

Ավելի թանձր փռվածքը բուսնելը ուշացնում է և նույն իսկ կարող է փճացնել, իսկ հունտը նոսր ծածկելիս ջրելու ժամանակ հունտը կհոսի և ցանքսը ճիշտ չի լինիր։

Ջերմանոցներում և ածուներում ցանելուց հետո մանր անցքեր ունեցող ցնցուղով ջրելու յե և ծածկելու յե կավարիչով, փեղկերով, խսիրներով, նույն իսկ փայտյա տախտակիկներով կամ այդ նպատակով շինված նյութերով։

Красгор. шт № 116. Стф. ОСТ Б 176x250. Краснодар Тип. „Культура", Красноармей

ՀՀ Ազգային գրադարան
NL0282556